Երկրորդ ընթերցում
Նախագիծ
լրամշակված տարբերակ
Կ-876-20.04.2010,01.06.2010-ԳԿ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

<<ԼԵԶՎԻ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. <<Լեզվի մասին>> Հայաստանի Հանրապետության 1993 թվականի ապրիլի 17-ի ՀՕ-52 օրենքի 2-րդ հոդվածը լրացնել 3.1.-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

<<Հանրակրթության ոլորտում միջազգային կրթական ծրագրերի իրականացման առանձնահատկությունները սահմանվում են Ղ«Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով: >>.

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ամփոփաթերթիկ

<<Հանրակրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին>>, <<Լեզվի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների փաթեթի վերաբերյալ Ազգային ժողովում 2-րդ ընթերցման ներկայացված առաջարկությունների մասին:

Առաջարկության հեղինակը	Առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն
1. ՀՀ կառավարություն ՀՀԿ խմբակցություն ԲՀԿ խմբակցություն ՕԵԿ խմբակցություն Ա. Բախշյան	1. Հաշվի առնելով օտար լեզվով հանրակրթական ծրագրերի իրականացման հարցի օրենսդրական կարգավորման շուրջ արտահայտված հանրային բազմակարծությունը, հայեցի լեզվամտածողության ձևավորման ձգտումը և ցանկություն ունենալով հասնել որակյալ ազգային կրթության համաչափ զարգացմանը՝ հարցը կարգավորել միայն <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու միջոցով՝ օրենսդրական նախաձեռնության փաթեթից հանելով <<Լեզվի մասին>> ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին>> ՀՀ օրենքի նախագիծը:	1. Ընդունված է մասնակի. <<Լեզվի մասին>> ՀՀ օրենքում ներառված է հոդված, որով սահմանվում է, որ միջազգային կրթական ծրագրերի իրականացման առանձնահատկությունները սահմանվում են <<Հանրա-կրթության մասին>> ՀՀ օրենքով:
2. ՀՀ կառավարություն ՀՀԿ խմբակցություն ԲՀԿ խմբակցություն ՕԵԿ խմբակցություն	2.<<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքում սահմանել <<այլընտրանքային կրթական ծրագիր>>, <<հեղինակային կրթական ծրագիր>>, <<փորձարարական կրթական ծրագիր>>, <<միջազգային	2. Ընդունված է

Ա. Բախշյան	կրթական ծրագիր>> հասկացությունները:	
3. ՀՀԿ խմբակցություն, ՕԵԿ խմբակցություն, ԲՀԿ խմբակցություն	3. Պահպանել կրթական ծրագրի իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատությունների հիմնադրման սահմանափակումը և մարզային քվոտավորման սկզբունքը:	3. Ընդունված է
4. ՀՀ կառավարություն ՀՀԿ խմբակցություն ԲՀԿ խմբակցություն ՕԵԿ խմբակցություն Ա. Բախշյան	4.<<Լեզվի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասում <<լեզուն գրական հայերենն է>> արտահայտությունից հետո «՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի>> արտահայտությունը փոխարինել վերջակետով:	4. Ընդունված է
5. Ա. Բախշյան	5. Երկրորդ մասը ձեւակերպել նոր խմբագրությամբ՝ «երկրորդ պարբերությունը ձեւակերպել հետեւյալ խմբագրությամբ՝ «Հայաստանի Հանրապետու-	5.Տվյալ հոդվածը ընդհանրապես օերնքի նախագծից հանված է

	թյան տարածքում հայերենի հենքի վրա նաեւ օտար լեզուներով նախամասնագիտական, մասնագիտական ուսումնական հաստատություն կարող է հիմնվել միայն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ>>:	: